


THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻՊՈՂՈՒՄԻ ՄԻՒՆԱԿՆԵՐԸ ԲԱԾ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա Ջ Պ Ա Յ Ի Ն, Գ Ի Ր Ա Կ Ա Ն ԵՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 37 ՀԻՒ ԵՈՐՔ, ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ, 23 1898 ԳԻՆ 3 ՍԷՆԹ

Ա Ջ Պ Ա Յ Ի Ն

Ճամբորդները կը պատմեն թէ Տիգրանակերտի Ասորոց կաթողիկոսը՝ Մակարայեցոց (Առաքելոց) վանքին տիրանալու նպատակաւ, անոր փլատակներն նորոգել տալ սկսած է։ Բաղադրին առաջնորդական տեղապահը թոյլ մէկը լինելով՝ ոմանք անհասներ այս խնդիր Պատրիարքարանի հաղորդած ու վանքին Հայոց վերաբերելը հաստատող կայսերական պէրաթին մէկ օրինակը խնդրած են։ Վերջի կոտորածներու ժամանակ այս դարևոր վանքն հիմնայապառ եղած ու կողպատուած էր բոլորովին։

Նոյն քաղաքի Ասորոց վեհ. կաթողիկոսի ձեռնադրութեան մին, ծայրագոյն վարդապետ, մը մահմէտականութիւնն ընդունած է՝ հակառակ Բրիտանիայի և կաթողիկոսի թախանձանց։

Ճամբորդներու մէջ ցորենի գինը բարձրացած ըլլալով՝ տեղւոյն Հայ և Տաճիկ ժողովուրդը (առաջինք ըստիպման տակ) հանրագրութիւն մը ներկայացուցած է տեղւոյ կուսակալին, խնդրելով որ Պարտաւար և Մուսուլ ցորեն փոխադրելն արգելէ՝ ժողովուրդը սովէ փրկելու համար։ Այս բաւական չի սեպելով, ամբողջ յարձակած է նաև փոխադրողներու վերայ ու գրաւելով անոց ցորենն քաղաք բերած է ի վաճառ։

Իրաւունքի մէջ կը կարգանք հետեւեալները.

«Մասկուայի Հայոց եկեղեցիի շէնքապահ մէջ ապաստանարան մը հաստատուած է «Գասպարեան Անկեղանոց» անունով, ուր կը պատասխարուին այժմ աղքատ, անոք և ծեր հայ կիներ, որոնք կ'ստանան թէյ, շաքար և ամսական 10ական րուպի» անունը և հազուադէպ համար։»

«Թիֆլիզի ներսէսան վարժարանի այս տարուան շրջանաւարտները են քսան և վեց աշակերտ, որոնց հինգը թրքահայ են։ Ռաֆֆիի կրթութիւնը որդին, Արշակ Մելիք-Յակոբեան, շրջանաւարտներէն մէկն է։ Վերջին տարիներ շրջանաւարտներու թիւը շատ աւելի եղած է քան ուրիշ ու է ժամանակ։

«Շարժումի մէջ կը կարգանք. «Հինգ հարիւր հոգիէն բաղկացած գաղթականներու խումբ մը Բագուէն ճամբայ հանուեր են դէպի Հայրենիք։ Իրենց կ'ընկերանան քահանայ մը, բժիշկ մը և խումբ մը ձիաւոր ոստիկաններ։

ԿՈՐՈՍՒՍ ԵՒ ԳԻՒՏ

Պէյրուցի Տիգրան մ.՝ եղիսաբէթ Մանուկեան (Եօզպէկեան), որ իւր Մարիամ և Հռիփսիմէ անուն գաւազաններով երբեմն Պէյրուցի Հայոց վանքի տան մէջ կը բնակէր, վերջերս մեկնած է ի Փարիզ և կամ յԱմերիկայ։ Իր ազգականը կը խնդրեն որ Տիգրան Մանուկեանի ուր ըլլալը գիտցող բարեկամք հաճին տեղեկութիւն տալ թերթիս Խմբագրութեան 4

Մ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ա Կ Ա Ն

Սպանիական սիրամարգը իր երփներանգ փետուրներէն մին ալ կորսնցուց։ Սանթիակոն ինկաւ անցեալ շաբթու. 2օր. Թորալ 30 հազարի չափ զօրքերով անձնատուր եղաւ Ամերիկացի դիւցազնին։ Այս զօրքեր, որք կ'երազէին երբեմն Ուաշինկթըն երթալ ու նախագահն գերի բռնել, իրենց զէնքերն ամերիկացոց յանձնած՝ փոխադրութեան կ'սպասեն։ Ընթել Սամ այս «կտորիներն» իր ծախիւք Լսպանիայ պիտի դրկէ՝ խնամակալ թագուհիի կառավարութեան իբր նուէր ու անձուանալի յիշատակ։

Բացի Սպանիայէ ամէն ազգ, բացի Սպանիացիէ ամեն մարդ հաստատապէս համոզուած է թէ՛ յամառ Տոներն անյոյս կուր մ'է կը մղեն Միացեալ Նահանգաց դէմ. գիտակցութեամբ կորստեան կը դիմեն ասոնք։ Սակայն Լսպանիացիին գլուխն ու վէրքը տաք են տակաւին. ցարդ դեռ զգալի չէ իրեն. կորստեան ծանրութիւնն դեռ իրականացած չէ իր աչքին. բայց երբ կուր դադրի, յաղթահարելոյն բազմաթիւ իր սովորականին ինչէ՛, յայնժամ միայն Մատրիտի կառավարութիւնն պիտի զգայ հարուածին ծանրութիւնը, որոյ պատճառած աւերներն դարեր հազիւ պիտի կրնան դարձանել։ Սպանիոյ ծովային զօրութեան թագն ու պսակը՝ Մով. Սէրվէրայի յօժաղը նաւատորմիդը քայած քայքայուած կը մնայ Սանթիակոյի առջև։ Անմատչելի Մորոյին ու անկաղթելի Սանթիակոյին վերայ աստեղագաղթ դրօշակը կը ծածանի յաղթանակով։ Մանիլայի ծովածոցը դեռ բոլորովին կուլ չէ տուած Մով. Սոնթէճոյի զրահարողներն, որք կենդանի վկայներ են Սպանիոյ շարքաւորութեան։ Բայց հպարտ Սպանիան կը յամառի տակաւին. «Իւր պատիւն դեռ գոհացում չէ գտած» Ժե՛ծ կ'ուզէ տակաւին։

Միացեալ Նահանգաց այս աննման յաղթութիւններն ո՛չ միայն Ընթել Սամի գինու և զօրութեան բարձր աստիճանը ճշգրեցին աշխարհի աջաց, այլ և ցոյց տուին միանգամայն թէ Սպանիացիք անճարակ էին, ու անոնց պաշտօնեաներն միամիտ ու անհեռատես։ Երբ Բէյլի վէրտի նաւատորմիդը Սանթիակոյ հասաւ, եւրոպական թերթեր Սէրվէրայն նոր նէլըն մը անուանեցին։ Երբ Մով. Լսլայ (ոչ թէ Ըշէյ) և Սամբուլն նոյն ծովայնորդին մէջ բանտարկեցին զայն, շատեր դեռ շարունակեցին զմայիլ Սթանիօլին հնարամտութեան վրայ։ Սէրվէրա գաղտնի փլան մը ունի, գաղտնիք մ'ունի, թակարթ մը պատրաստած է, կ'ըսէին, միամիտ ամերիկացիներուն։ Սակայն ո՛չ փյուն կար և ո՛չ գաղտնիք. թակարթը Սանթիակոյի ծովածոցն էր, ու Սէրվէրա ինք բանտարկուած կը մնար։ Եւ երբ բարձրագոյն հրաման եկաւ իրեն՝ ամեն պարագայի տակ դուրս ելնել նաւահանգստէն, անճարակ ծովակալը այնպիսի ժամանակ մը ընտրեց (առաւօտեան ժամը 9) երբ բնականաբար թշնամիի կողմը՝ զօրք, նաւատոր, պաշտօնեայ և ամեն մարդ՝ արթուն ու աշխոյժ եղած պիտի ըլլար աշխատելու, կուռելու կամ գործելու լաւագոյն արամադրութեան մը տակ։ Սէրվէրայի պարտութիւնն անխուսափելի էր ի հարկէ, զի մեծագոյն զօրութիւն մ'ունէր իրեն դէմ։ Բայց առանց իսկ թեթեւ վնաս մը տալու ամերիկեան նաւատորմիդին, ջարդ ու կտոր ըլլալ՝ կատարեալ ապիկարութեան նշան էր։ Մի քանի ժամերու մէջ սպանիական ամենալաւ զրահարողներէն ոչինչ ազատեցաւ. իսկ ամերիկացիք ոչինչ կորսնցուցին։ Եւ թող Եւրոպական նախապաշարուած «խաղաղաճառ» կոչէ Եանքին ու զմայիլ Սէրվէրայի հնարագիտութեան վրայ... Զատարակ մահկանացու մը, զրահարողի մը վրայ ոտք չի գնող մի պարզ քաղաքացի՝ Սէրվէրայէ աւելի ծախող գործ մը չի պիտի ընէր, եթէ Յուլիո Յի պատմական առտուն անոր հրամանատարութիւնն վարած ըլլար Մարիա Թէրէսայի կամուրջին վրայ։

Մանիլայի և Սանթիակոյի մահացու հարուածներն միայն բաւական ըլլալու էին արդարեւ հին փառքերով արբշիտ պառա Սպանիան սթափեցնելու համար։ Բայց այս վերջինս իր կացութիւնն չուզեց հասկնալ. և կը թուի թէ հասկըցած չէ տակաւին, զի կը յամառի ճիշդ այն կնկան պէս որ ջուրը նետուելէ վերջ իսկ՝ մատնեալ շարժումով «մըկրատ» կը նշանակէ — դարձեալ միկրատ։ Այս պարագաներու տակ կը թուի թէ Ընթել Սամ պիտի ստիպուի վերջապէս

տալ սուկալի հարուածը՝ յղելու այս յամառ կինն ովկիանոսի յատակ, ուր իւր նաւատորմիդն կը քննայ արդէն ջարդ ու բուրդ։ Ընդհանուր հրամանատար 2օր. Մայլըս արդէն ճամբայ ելած է դէպի Փորթօ Րիքօ՝ զայն ևս գրաւելու համար։ Վաթարն որ ամենէ ծանր հարուածը տալու կոչուածն ունի, կիրակի օր կը կարծուի թէ ճամբայ կ'ելնէ՝ Սպանիայ երթալու։

Արդեօք Մատրիտն ալ առնելու է հասկնելու համար այս պինդ զլուխ ազգին թէ ինք աւելի յարմարութիւն ունի իր հիւրընկալած բարեկամ գրահանալին տակ թօրփելոյ պայթեցնելով օդը հանել զայն վատաբար, քան ճակատ առ ճակատ կուռիլ Եանքի զգրաց հետ։ Զ. է.

Լ Ո Ւ Ր Ե Ր

—Միացեալ Նահանգաց կառավարութիւնն Սանթիակոյի սպանիական զինուորներու զէնքերն պիտի գրաւէ. պաշտօնեաներն միայն իրենց սուրբը պիտի պահեն։ —Գրաւուած երկիրը 5000 քառակուսի մղոնի չափ է։ —Մ. Նահանգք 30000 գերիներու ճանապարհի ծախուց համար պիտի վճարեն իբր 1/2 միլիոն տոլար։ —Ուաշինկթընի կառավարութիւնը որոշած է բարձրաստիճան պաշտօնեայնէր գերի պահել, որպէս զի ի հարկին՝ փոխանակէ ասոնք ամերիկացի գերիներու հետ։ —Փորթօ Րիքօն ալ գրաւելէ վերջ՝ ամերիկացիք պիտի յարձակին Հավանայի վրայ։ —Եթէ ամեն տեղ սպանիացի զինուորք ու զօրապետք թօրալի և անոր ստորադասելոց օրինակին հետեւին, բոլոր Սպանիան գրաւելու համար քանի մը շաբաթներ բաւական պիտի ըլլան։ —Սանթիակոյի գրաւումն 125 միլիոն տոլարի արժեք Մ. Նահանգաց։ —Մանիլայէ եկած լուրերն ցոյց կուտան թէ Մով. Տուվի հաւանականաբար պիտի չափուի Գերմաններու հետ։ —Գաղաքիս նաւահանգիստին մէջ տեղաւորուած անհամար թօրփիլոներն ու աւաններն դուրս հանուեցան, զի Սէրվէրայի նաւերն ալ կարող չեն մեզ ուժեղեցնելու գալ։ —Սանթիակոյի պաշտօնական անկումը տեղի ունեցաւ անցեալ կիրակի օր։

—Գարմիր Խաչի ընկերութեան շոքեման առաջինն եղաւ որ Սանթիակոյի ծովայնորդին ներս մտաւ. նոյն նաւահանգստին մէջ գտնուած բոլոր թօրփիլոներն վերցուեցան կամ պայթեցան ամերիկացոց կողմէ։ —Մոնթէրի գրտհապատ շոքեմաւը, որ օգնութիւն պիտի տանի 2օր. Տուվի, ճամբուն վրայ նախ Բարոլին կղզիներն պիտի գրաւէ։ —Մովակալ Սամբուլի և Լսլայի մէջ անհամաձայնութիւն կայ. առաջինը, որ Սէրվէրայի դուրս եկած ատեն՝ իր գրօղականաւով հեռուներն կը գտնուէր, կը ջանայ սպանիական նաւատորմիդն ոչնչացնելու փառք իւրացնել՝ իբր ընդհանուր հրամանատար ողջոյն նաւատորմիդին։ Բայց Լսլայ էր մարդը որ Սէրվէրայի զրահանաւերը կործանեց։ Այս խնդրոյ լուծումն բարձրագոյն պաշտօնէից իրաւասութեան կը պատկանի։ —Անցեալ կիրակի, Սանթիակոյի գրաւումէն վերջ 2օր. Գիպին քաղաքին կառավարիչը անուանուեցաւ։ —2օրավար Թորալ երբ Սպանիա երթալ, պիտի դատուի զինուորական ատենի մը սուղէ։ —Այլ և այլ տեղերէ խաղաղութեան առաջարկներ կուգան նախագահին, բայց Մաք Բիլլիի հաստատուն է իր որոշման վրայ։ —750 հազար տոլար գրամ զըրկուեցաւ քաղաքէս՝ Սանթիակոյի ամերիկեան զօրաց տըրուելու համար. կառավարութիւնն հրահանգ տուած է զօրքերուն առ և սուրբ ժամանակ ամերիկեան գրամ միայն ընդունիլ՝ եթէ մանրուք առնել հարկ ըլլայ տեղացի վաճառականներէ։ —2օր. Մայլըս կ'ըսուի թէ 10000 հոգի ունի իրեն հետ՝ Փորթօ Րիքօն գրաւելու համար. 70 հազար հոգի օգնութեան պիտի զրկուի ընդհանուր հրամանատարին, եթէ հարկը պահանջէ. Մով. Սամբուլի նաւերէն քանիները ընկերացած են 2օր. Մայլի։ —Սանթիակոյի անձնատուր եղած ատեն, նոյն նաւահանգստի մէջ գտնուող 6 վաճառականական նաւերն գրաւուած են ամերիկացոց կողմէ։ —Պաշարման ժամանակ Սանթիակոյի մէջ ժողովուրդը ձիւր և շան միս հազիւ կրնայ եղեր ձեռք ձգել՝ իբր միակ միջոց ապրելու համար։ —Նիւ Եօրքի և Սանթիակոյի միջև բանող շոքեմաւային ընկերութիւնն պիտի վերսկսի իր գործ, զոր ընդհատուած էր պատերազմի առթիւ։



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
Կը Հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, . . . . . ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ  
ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	ՏՂ. ՍՄ.	Տարեկան	10 Փրանք.
Վեցամսայ	50	Բաժանորդագիրն ԿԱՆՈՒՆԻԿ	
Շնամսայ	40	վճարելի է միշտ:	

Մտր կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝  
To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԳ, ՇԱՐԱԹ, ՅՈՒՆԻՍ 23 1898.

ԱՉԳ

Այսուհետեւ ծնունդի, ամուսնութեան և մահուան հասարակ լուրերը պիտի նկատենք իբր ազգային ծանուցումներ, և պիտի կրնանք զայնս հրատարակել՝ միայն որոշեալ փոքր գումարի մը փոխարէն, առանձին սիւնակի մը մէջ:

ՎԵՐԱՀԱՍ ԱՂԷՏԸ ԵՒ ՄԵՐ ԿՂԵՐՆԵՐԸ

ՏԻԳՐԻՍԻ 33 թուի՝ «Ամուսնութեան խնդիր» խմբագրականը առիթ է տուել ինձ մի հայեացք ձգել մեր Հոգևորականութեան անտարբեր ընթացքի վերայ:

Հ. Է. յօդուածի վերջում մի արդարացի նկատողութիւն է անում. «Յարմարագոյն առիթն է, ասում է, որ հարապարակաւ հարցունենք այժմ գէթ մեր Ամերիկայի վարդապետներէն, Քահանաներէն և քարոզիչներէն՝ թէ ի՞նչ կ'ընեն ասոնք և ի՞նչ ըրին այս մասին...: Երիտասարդութիւնը կ'փտտի հոս ամեն օր. ի՞նչ կը մտածեն և ի՞նչ մտածած ունին այս Աստուծոյ պաշտօնեաները՝ գէթ վտանգը մասամբ վանելու համար» և այլն:

Կ'մասնաւորեն մեր կողմից անցեալն արդէն անցել է. անցեալները քննարկ, կորուստը անբուժելի կ'ընայ, բայց ներկան ու ապագան մեր ձեռքումն է, մեր առաջն է, որը պահանջում է իւրաքանչիւր ձեռնհաս՝ խնդրին իրազէկ անհատներին և զլիսաւորապէս կղերականներին, (որոնք սրտին, մեր կարծիքով, խնդրը աւելի մօտ պիտի համարէր) բազմակողմանի լուսաբանութիւն, կարծիքներ չըփռում, վերջնական հետեւութիւն և անմիջական գործադրութիւն:

Երբ խնդիրը չհաջողական է՝ շողողուն ոսկու շուրջն է դառնում. երբ խնդիրը նիւթական է՝ հարստանալու մասին է, ամեն կողմից արձագանք է տալիս. ամեն ոք՝ գիտուն թէ տգէտ, շտապում է առաջարկել իր կարծիքը, իր ծրագրերը, իր մասնակցութիւնը. ինչո՞ւ — որովհետեւ դորանով ընդհանուրի հետ և մասնաւորապէս իր ապագան ապահովուում է. որովհետեւ ներկայ ընկերային տիրող պայմաններում հարստութիւնն է դեր խաղում, կամ այլ խօսքով՝ ոսկու փայլով լլցածները կարծիքով — ով որ հարուստ չէ, նա մարդ չէ: Ամենեւին մենք հակառակ չենք եթէ կազմել խոշոր կապիտալական ընկերութիւն որ հաւաքական ուժով մրցին գոյութեան պատերազմում, որով համեմատաբար գործելու ընկերական ոգին կ'զարգանայ, որին այնքան կարօտ է մեր ազգը, մեր ժողովուրդը: Բայց, եկէ՛ք խոստովանինք. սորանից ի՞նչ օգուտ կ'ստանայ ազգը, Հայրենիքը, քանի որ պարզ նկատում ենք՝ թէ ներկայ հանգամանքներում ապրող գաղթականութիւնը, որի մեծամասնութիւնը երիտասարդութիւնն է, կանգնած է կորուստարեւր վիճի եզերքին՝ ամեն օր մինը միւսի յետեւից գլորում են անդառնալի կորուստով՝ Ընթել Սամի օտարացնող ձուլարանի մէջ, ուր եթէ ոչ իրանք, սակայն իրանց սերունդը հընացած լաթի պէս հեռու է չարտելու Հայ անունն էլ, Հայութիւնն էլ, Հայրենիքն էլ. չէ՞ որ Հայրենիքը Ամերիկան է, քանզի այն տեղ է ծնւել. ազգութիւնը — փառք Աստուծոյ, Ամերիկան հոս ազգ չի ճանաչում. իսկ ազգային զգացում. շատ պարզ է, լեզուի հետ կը մոռացուի կ'կորչի, որովհետեւ մօր ազդեցութիւնը գերակշիռ է:

Աւելին ասենք. նիւրբում հանդիպեցինք մի համեստ Հայ ընտանիքի, որ հինգ-վեց տարի է այս երկրում են. հարցնում ենք նորա զաւակներին՝ 8 տարեկան տղային և 12 տարեկան աղջկան. — Դուք Հայ էք թէ ամերիկացի. ի՞նչ էք կարծում — ի՞նչ պատասխան ստացանք. «Աստուած ոչ անի մենք Հայ լինենք. մենք ամերիկացի ենք, ինկիլը ենք. Հայն ի՞նչ է»: Մի օր գաղթականութեան մի շատ յայտնի անձնաւորութեան հետ խօսում էինք թէ ինչ անել որ Հայերը Ամերիկայում իրանց ազգութիւնը

չ'մոռնան: Երկուսս հասանք այն եզրակացութեան թէ պէտք է Հայ ընդ Հայի ամուսնանալ և ընտանիքներում մասնաւորապէս մայրենի լեզուի դաստիարակութեան ուղի դարձնել, որը միակ միջոցն է Հայութեան ոգին վառ պահելու, և որով հնարաւոր է սէր արձարծել դէպի Հայութիւնն ու Հայրենիքը: Պատ. Հայկունին՝ խօսակիցս, մի նմանօրինակ ցաւալի պատմութիւնով հետեւեալ փաստը ներկայացրեց. նա ասաց. «Ես ճանաչում եմ նիւ Եորթում բաւական Հայրենասէր բարեկեցիկ մի ընտանիք, որոյ զաւակները թէ՛ լեզուով և թէ՛ զգացումով բոլորովին օտարացել են, և այլ ևս յոյս չ'կայ որ նորանք երբ և իցէ Հայութեան օգտակար լինեն կամ ազգի անդամ ճանաչեն, թէ է ծննդեամբ և արեւնով Հայ են»:

Որ սորանք փաստեր են, որ օտարացողները ձեր մըկըրտածներն են, մենք անձամբ ստուգել ենք. համեցէ՛ք, դուք էլ ստուգեցէ՛ք, Հէնց նոյնիսկ ձեր գտնւած տեղն ու տեղը. սակայն լուի ստուգութիւնը բաւական չէ. ազգը կորստից ազատող դարմանը, միջոցը խորհեցէ՛ք, առաջարկեցէ՛ք և ձեռք ձեռքի տուած՝ կենդանի խօսքով և գրչով մաքառենք այդ կորուստարեւր թշնամու դէմ:

Եթէ նմանօրինակ կամ այլ տեսակ խնդիր առաջարկել մամուլի միջոցով Ամերիկայում կամ Եւրոպայում կղերականներին, հազարաւոր կողմերից աղմուկ կ'բարձրացնեն. անհաշիւ փաստեր և միջոցներ կ'առաջարկեն, և այն բանակոյտերից շատ դիւրութեամբ կարելի կ'լինի միջին ճանապարհը ընտրել, հաւանական միջոցը գործադրել: Այս բոլորը, ի հարկէ պարզ ապացոյց է նորանց յառաջադիմութեան, նորանց քաղաքակրթութեան: Սակայն առաջարկութիւնը այնպիսի բարդ խնդիր չէ, որ միջից կարող չը լինէ՛ք դուրս գալ: Մեր խօսքը, ի հարկէ, տգէտ եկեղեցականների մասին չէ, որոնք բացի արարողութիւններից՝ մկրտութիւնից, մեռել թաղելուց, պսակելուց և այլն՝ ուրիշ պարտաւորութիւններ չեն ճանաչում. բայց կատարեալ իրաւունք ունինք կրկնելու և մինչև իսկ պահանջելու մեր վարդապետներից և բողոքական քարոզիչ Պատուելիներից, որոնք եթէ ոչ եւրոպական բարձր, գոնէ այնքան կրթութիւն ունեն, որ, մեր կարծիքով, դժուար չէ նորանց համար խնդիրը քրքրել, ուսումնասիրել և անհրաժեշտ միջոցները առաջարկել մամուլի միջոցով. և չէ՞ որ ՏԻԳՐԻՍԻ էջերը բաց են ինչպէս ամենի, նաև ձեր առաջ: Կասկածում ենք, մեր կղերականները առարկեն, թէ կղերին չի վայելիլ մամուլի միջոցով հրատարակ դուրս գալ. ո՛չ, ո՛չ. եթէ հարցը բանակուի մասին լինէր, թերևս իրաւունք ունենայիք խոյս տալ. թէ էլ այդ դէպքում ևս, համեստ բանակուիք, կարծիքների փոխակալութիւնը չէր նուստացնել ձեր պաշտօնը. բայց խնդիրը այնքան կենսական, այնքան կարևոր է, որ ոչ մի պատրուակ չի արդարացնել ձեզ. ուրեմն բարեհաճեցէ՛ք ցած գալ ձեր ուղիմպիական բարձրութիւնից, մի փոքր էլ ձեզ կերակրող ժողովուրդի ցաւերով զբաղեցե՛ք, և հաւատացնում ենք ձեզ Հէնց ձեր շահն է պահանջում, եթէ չ'ասենք ձեր բարոյական պարտքն է. Աստուածաբանական խնդիրներով, ժողովուրդին վերացական (ձեր կարծիքով հոգեշահ) անհասկանալի հարցերով զբաղեցնելու դարը վաղուց անցել գընացել է. այժմ մենք ապրում ենք գործնական դարում. — գոնէ նայեցէ՛ք Ամերիկայի կղերին՝ և օրինակ առէ՛ք ժողովուրդի բարեկամը՝ լաւ, սիրուած կղերն նա է: Ո՞վ հետեւում է Փրկչի ինքնօրինակ պատուէրին. — «Հովիւ քաջ որ դնէ զանձն իւր ի վերայ ոչխարաց իւրոց»:

Իսկ ՏԻԳՐԻՍԸ պիտի քարոզի գաղթականութեան Հայրենիք վերադառնալ և ուրախ պիտի լինի, եթէ Ամերիկայի Հայ գաղթականութիւնը Հայրենիք վերադառնալով՝ այլ ևս ՏԻԳՐԻՍԻ Հրատարակութիւնը աւելորդ համարուի: Մի ուրիշ անգամ կը դառնանք այս հարցի՝ պատմական փաստերով ապացուցանելու գաղթականութեան աղէտալի կորուստը:

Հ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆՑ

ԿԷՍ ԵՐԵՍ «ԺՈՂՈՎՐԻՍԿԱՆ ՔՆԱՐ»ԷՆ

«Շատ տարիներ անցան զացին ես չի մոռցայ այն սև օր, «Երբում վերջին անգամ ըսի «մնաս բարեաւ» իմ հէգ հօր. «Նա զիս գրկեց սրտին վերայ, արտասուածքոր աչքերով «Պագաւ ճակատս, սրբեց քրտինքս իւր դողդոջուն ձեռքերով: «Երթա՛ս բարեաւ, սիրուն զաւակս, Աստուած ըլլայ քեզ ընկեր, «Ի՞նչ փշալից ճամբուդ վրայ բուսնին շուշան ու վարդեր, «Ե՛հովային աջը ըլլայ քեզ օգնական, առաջնորդ, «Նորա աչքեր հսկեն վրաջ տիւ և գիշեր, հէ՛գ ճամբորդ: «Գնա՛, որդեակ, Հայոց երկրէն օտարաշխարհ պանդուխտ լիւր, «Այլ քո կրօնին, կա՛ց քո լեզուին, չո հայրենեաց անձնուէր... «Դու մի՛ մոռնար այն սուրբ երկիր, այր հողերու ներքև կան «Մեր նախահարց սուրբ ոսկորներ, նոցա անշուք գերեզման... «Գնա՛, զաւակս, քաջ լի՛ր արի, ճգնէ՛, ջանա՛, աշխատէ՛, «Ի՞նչ բազդ, վրձակ ու ապագայ քրտանցդ մէջ՛ը որոնէ՛. «Ես կը յուսամ ապրիլ տեսնել վերադարձիդ քեզ նորէն, «Իսկ թէ մեռնիմ պիտի դիտեմ քեզ ամեն ժամ երկինքէն»:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ

Յունիս 15ի երեկոյին «Միացեալ Բարեկամք Հայաստանի» ընկերութիւնն իր նախագահին՝ Տիկին Ճիւլիա Ուօրտ Հալի մի փառաւոր ընդունելութիւն տուաւ ի թիւ 3 Փարք ըսթրիթ, Պոսթոն՝ այս վերջնոյ Հընդմէ վերադարձին առթիւ: Երեկոյի յերկայ էին երկսեռ Հայ և Ամերիկացի բազմութիւն մը, ինչպէս նաև Հայ մանկութիւ, որք Տիկին նախագահի մասնաւոր ուշադրութիւնն գրաւած էին:

Տ. Կիւլեզեանի բարի գալուստ մաղթող մի հակիրճ բանախօսութեան պատասխանելով Տիկին Հալի՝ իր խորին շնորհակալութիւնն յայտնէ յետոյ, ըսաւ թէ՛ ի սրտէ՛ ուրախ էր այնչա՛փ Հայեր տեսնել Ամերիկայի հիւրընկալ քրօշակին տակ պատուասիրուած. «Ուրախ եմ, ըսաւ, բարի գալուստ մաղթել ձեզ՝ վստահ ըլլալով որ օգտակար քաղաքացիներ պիտի ըլլաք հոս, և կը յուսամ թէ պիտի գտնէք Ամերիկայի մէջ միութարութիւն մը, որ ձեր մայր Հայրենիքէ հեռի ապրած լինելուդ տըխրութիւնն պիտի կրնայ ամոքել: Դուք գմեզ որդեգրելու էք, և մենք գմեզ, որով՝ իւր տեսակին մէջ լաւագոյն՝ նոր ցեղ մը յատա՛յ պիտի գայ, Հայ-Ամերիկացի ցեղը»:

Համառօտ ատենախօսութիւններ ըրին նաև Փրօֆ. Եէշիւեան, Տիար Պլաքուր, Վեսմ. Տ. Պլանչըրտ, Տ. Գ. Էքսէրճեան, Օր. Ալիս Ս. Պլաքուէլ, Տիար Դամիանոսեան, Տ. Հ. Մ. Գիրէշճեան(նիւ Եորթէն) Տ. Սէլեան և Պ. Պուլիուրճու:

ԳՐԱԿԱՐԱՆԻ ԴԵՐԸ

Յունիս 12, Միջբերտ. Նախորդ Կիրակի երեկոյին տեղւոյս Ընթերցասիրաց Միութեան լսարանի սրահին մէջ երկու ժողովներ տեղի ունեցան: Առաջին ժողովն ընթերցասիրանի միութեան անդամական ժողովն էր, որոյ արդիւնքն եղաւ, Միութեան կանոնադրի քանի մը յօդուածներու պատշաճաւոր բարեփոխումը, նաև գրադարանի համար մի քանի օգտաւէտ գրքեր կատարելու որոշումը. նոր անդամակցողներ ալ եղան, անանկ որ այժմ միութեան անդամոց թիւը 14ի հասաւ:

Երկրորդ ժողովն էր Աղջիկնամ Ընկերութեան վեցամսեայ անդամակց ժողովը, որուն, այս առթիւ, ընկերութեան գործադիր ժողովը՝ իւր վեցամսեայ հաշիւը ներկայացուց, չի նայելով ընկերութեան անդամոց քիչ ըլլալուն: Վեց ամուսն ընթացից մէջ գոյացած հասոյթը 27 տղար և 9 զած էր: Հաշուէն յետոյ գաղտնի քուէարկութեամբ վարչութեան նոր անդամներ ընտրուեցան. Ատենապետ Ս. Ա., Ատենադպիր՝ Մ. Մ. և Գանձապետ՝ Մ. Օ.: Հուսկ յետոյ անդամոց մեծամասնութեան որոշմամբ ընկերութեան կանոնադրի քանի մը յօդուածները բարեփոխուեցան: Սոյն ընկերութեան ալ նոր անդամակցողներ եղան. այժմ անդամոց թիւը 14 եղաւ:

Կը տեսնէ՞ք գրադարանի դերը, ուշիմ ընթերցողք ՏԻԳՐԻՍԻ: Երկու տարի առաջ տեղւոյս փոքրաթիւ Հայ երիտասարդութիւնը ո՛չ գրադարան ունէր և ո՛չ ալ ընկերութիւն կազմելու հոգ կ'ընէր, սակայն ուրախ եմ տեսնելու՝ որ հիմայ երկուքն ալ ունի: Նախ ունեցաւ գրադարանը. մերթ ընդ մերթ ընթերցասիրութեան օգուտները զգալով՝ ընթերցուն սկըսաւ անմահ Բաֆֆի, Մերենցի, Գամառ. Բաթրիպայի և բոլոր յարգելի Հայ Հանճարներու հեղինակու-



ՈՒՍՓՐԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ԳՈՑԵՆ

Ուսթըր, Յուլ. 12
Անցեալ շաբթուայ նորընտիր Հոգաբարձութիւնը հրատարեցաւ զեռ պաշտօնը չի ստանձնած. ասոր վրայ Տ. Մաշթոց վարդապետ յայտարարութիւն մը ցրուել տուաւ թէ «Ս. Փրկիչ եկեղեցին պիտի գոցուի. ով որ չի ուզեր անոր գոցուիլը, թող յառաջիկայ կիրակի Ս. Եկեղեցի գայ կարգադրութեան մը վրայ խորհի»: Ուստի կիրակի առաւօտ Հետաքրքիր բազմութիւն մը լեցուեցաւ Ս. Փ. Եկեղեցին. ղռնփակ սկսաւ խնդրի քննութիւնն՝ յատուկ ընտրեալ դիւանի մը կարգադրութեամբ: Տ. Մաշթոց վարդապետ խնդիրը մէջ տեղ դրաւ, ըսելով թէ ինք այլևս հրաժարեալ է և չէ կարող եկեղեցին առջուան պէս կառավարել. և քանի որ նորընտիր Հոգաբարձութիւնը իւր հրատարակած տուաւ, և ինք թիւնական անձկութեան մէջ է, ուստի առաջարկեց որ յանձնախումբ մը ընտրուի, որ անոր յանձնէ Ս. Փրկիչ եկեղեցւոյ բանալին. հակառակ պարագային ստիտեալ եմ, ըսաւ, Ս. Եկեղեցւոյ բանալին ալ Հետս տանիլ. զի պաշտօնական մարմին մը չ'ըլլալուն՝ պատասխանատուութիւնը իմ վրայ կը ծանրանայ. իսկ եթէ ժողովուրդը չ'ուզեր որ եկեղեցին գոցուի, յայնժամ կը մնամ, պայմանաւ որ ժողովուրդը 40 տոլար ամսական վճարէ, և եկեղեցական գործոց պատասխանատուութիւնը յանձնարարի վրայ մնան: Երկայ ժողովուրդը բաւական երկար թերևս դէմ վիճաբանելէ յետոյ, վերջապէս որոշեց որ եօթը անձերէ բաղկացեալ յանձնախումբ մը ընտրուի, որը Ս. Փրկիչ եկեղեցւոյ բանալին և անոր հոգը առժամանակապէս իր վրայ առնելով՝ բանակցի նաև Տէր Մաշթոց վարդապետին հետ, որու հետ եթէ համաձայնութեան գտնուի՝ եկեղեցին բաց պիտի մնայ. իսկ հակառակ պարագային՝ Ս. Փ. Եկեղեցին պիտի գոցուի, մինչև յաջողութիւնը նոր վարդապետ մը կամ եպիսկոպոս մը ընտրել տայ: Սոյն յանձնարարի անդամք են՝ Տ. Մ. Գաղանձեան, Ա. Գաղանձեան, Պ. Թորոսեան, Պ. Գուլումեան, Կ. Սանթրոնեան, Մ. Բարակեան և Ս. մհ. Գրիգորեան:
Հ. Թ.

ԱՁԳ

Նիւ Եորքի Հայ-Աւետարանական Եկեղեցիի Հովիւը Հայկակ Երէջ Սաղոյեան ամսուան մը արձակուրդով քաղաքէն մեկնած է: Այս միջոցին Հովիւին տեղը լեցուցնելու համար Եկեղեցիին կողմանէ կոչուած եղած է ազգեցիկ քարոզիչներու որ պաշտամունքներու առաջնորդեն:

Արքայ թիւ 22 շաբթական արթթի. ժողովին պիտի առաջնորդէ Պր. Տրգրան Տոնճեան և կիրակի առտուան պաշտամունքի քարոզը պիտի խօսի Պատ. Հայկունի: Բաղադրի հայ գաղութը սիրով կը հրահրուի 207 Իսթ, 30րդ փողոց, «Էսէմս Մէմորիլ» եկեղեցին:

ՏԻԳՐԱՆ ԲԻԻՓԷԼԵԱՆ

Մինակ Հայ Մաիրիչն ի Նիւ Եորք, 607 3րդ Ալիւի, 39ր և 40ր մէջ

Կը թելագրէ իւր հայրենակիցներուն, փոխանակ օտարի իրեն երթալ, որ ոչ թէ միայն աւելի շի պահանջեր, այլ լաւագոյն ծառայութիւն կը խոստանայ իր յաճախորդաց:

ԱՁԳ

Երկու ամիսի չափ առաջ գնած մէկ Պէլլաթիր հեծեւանիւս ծախել կուզեմ՝ ձեռք մը պայտիքըլի յատուկ հազուստով մէկտեղ: Դիմել առ Տ. Յ. Տիգրիսի միջոցաւ:

ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ ԵՒ ՈՒՂՈՒՆԵԱՆ

Վաճառականք և Նորոգիչք
Թիւ 159 Իսթ 27րդ Փողոց, Նիւ Եորք.



Պատիւ ունին ծանուցանել թէ այս խանութ հաստատած են վաճառելու համար ամեն տեսակ պատրաստ հագուստներ՝ խիստ աժան դրներով: Կը կրեն արտաբերած նոր հագուստներ. կը նորոգեն հիւսիս, կը ներկեն, կ'արթուեն (իւթիւ ընել) և կ'ընեն ինչ որ կարևոր է գործածուած զգեստեղէններուն նորի երեւոյթ տալու:
Կը վաճառեն նաև ամեն տեսակ ճերմակեղէն ևն. ևն. 4

ԱՁԳ

Կը փութամ հազորդել քաղաքիս Հայ հասարակութեան թէ Բոմբէն փողոցի թիւ 230 ճաշարանը գրեցէն ի վեր մասնաւոր հոգ ու խրեմաք կը տարուի կարգ ու սարքի, մաքրութեան և կերակրող համեղութեան: Միանգամ փորձելը կը բաւէ մնայուն յաճախորդ դառնալու համար:
ՄԱՅԳ ՊԱՔԱՅԵԱՆ
Հօրէնս Մասս. 3

ԲԱՆԱՍՏԵՂՍՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Նկատելով որ ամեն կողմերէ շատ մը բանաստեղծութիւններ կը շրկուին մեզ, և նկատելով որ Տիգրիսի մէջ՝ տեղւոյ անձկութեան պատճառաւ չենք կարող գտնուիլ հըրատարակել, որչա՞ծ ենք՝ մեր ընդ ունի առ այս ոտանաւորներն՝ մեծաւ մասամբ՝ առանձին հատորի մը մէջ մտնուիլ, պայմանաւ որ ամէն փափաքող անձ իր ոտանաւորին համար հարկ եղած շարքու, և Լէքթրոթայի շինելու և տպագրելու ծախքերն վճարել յանձն առնէ կանխաւ:
Հեղինակներն իրենց իւրաքանչիւր ոտանաւորին համար մէկ կամ երկու օրինակ պիտի ստանան Հրատարակուած հատորէն՝ երբ լոյս տեսնէ:
Այս հատորը պիտի անուանուի «Ժողովրդական քնար»:
Մանրամասնութեանց համար գրեւ լրագրոյս նմաբարութեան:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳԻՏԱՐԱՆ


Գերորդ Տպագրութիւն
Մաքուէլ Սըմըրվիւ
Հրատարակիչ

Կը բաղկանայ 25 մեծադիր հատորներէ, որք կը վաճառուին բաժանորդագրութեամբ միայն:

Սոցա գինն է,
Կտաւեայ կազմ 62 տղ. 50 սէնթ
Կէս կաշիակազմ 87 ,, 50
Փառակազմ 100 ,,

Առաջին տեսակէն կը դրուի անոնց որք յանձն կուեն վարել ամիսը 2 տոլար 50 սէնթ: Երկրորդին ամսավճարն է 3 ու կէս տոլար, իսկ վերջինին՝ 4 տոլար:
Այս Համագրութեան Ամերիկեան միակ արտօնեալ տպագրութիւնն է: Մնացեալք անկատար են ամեն կերպով: Մանրամասնութեանց համար դիմել նմաբարութեանս:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ,
Թիւ 628 3րդ Ալիւի, Նիւ Եորք:
Կը ծանուցանէ թէ, Բրիտանիայացուցիչ Համաւաւոր մի վաճառատան,



Կարող է ծախել ամէն տեսակ հեծեւանիւններ խիստ աժան գներով: Գնել փափաքողք եթէ իրեն դիմեն գոհ կը մնան միշտ:

Ա. ԹՕՓՈՒՉԵԱՆ.

ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ.
Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք.

Այս խանութին մէջ կը վաճառուին ամէն տեսակ կոշիկներ խիստ աժան գներով: Մեր հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք:



Նոր ապսպրուած կոշիկներ կը կարենք ձեւաւորել վայելչ լինելով:
Կը նորոգենք հին կոշիկներ յափաւոր գներով:
Ղաբիշի մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. եւ վստահ եղիք որ շատ գոհ պիտի մնաք:
— 239 Իսթ 26րդ փողոց —

Հ Ի Գ Ի Ս
ՄԱՁԻ ԴԵՂ



Կը հարսնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւսիսը:
Միանգամ փորձել բաւական է սաղեղին արժէքը զիտարու համար, որ արեւելեան խոտերէ պատրաստուած է յոյժ հաճելի միջոցով:
Կը ծախուի րոտր զեղադորձներուն քով:
Գին 50 Սէնթ միայն:

Կարելի է ստանալ նաև Տիգրիսի րնկերութենէն:

Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարակեանի քով, թիւ 45 Էքսէնք ըսթրիթ, Ուսթըր, Մասս:

Հաստատեալ 1854



Յ Ա Կ Ո Ռ Խ. Խ Է Ր Պ Ե Կ Ե Ա ?
(Ներկայացուցիչ)
ՈՒՒԼԼԻՄ Պ. ԳԵՆԷՂԸՆԸՆԸ
Ե Ղ Բ Ա Ր Ծ,
Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Բ
Գինի, Օղի, ոգևից ըմպելիք:
Թիւ 202, 204 Իսթ 29րդ փողոց
Նիւ Եորք, Ն. Ե.

Պատիւ ունի ծանուցանել արգել հասարակութեան թէ իւր վաճառած ըմպելիքներն ոչ՝ միայն փորձեալ և անխաղախ են, այլ և դիւրամտացելի են ամէն գասակարգի անձանց:
Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, տեղական, Գալիֆորնիայի և տաճկական ամէն տեսակ ուրաք, օղի, գինի, շամբանիս, մասթիքայ, գարնիւր, պրանտի, ափսնիլ և այլն, իրենց ամեն տեսակներով:
Փափաքողաց գներու ցուցակը, զրկուի առանց մ'եւ է ծախելի:
Յանձնարարութիւնը կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ եւ փութով: Բաղադրի մէջ ապրանքներն ձրի կը զրկուին, իսկ քաղաքէ դուրս զրկուածներուն ծախքը գնողներուն վրայ է:
Ըմպելիքներ կը վաճառուին թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով: (Հօլմէյլ անտրիթէյլ)
Մեր յաճախորդք երբ չի հաւնին իրենց գնած ըմպելիքներուն, յանձն կուենք զայն փոխել, եթէ պակաս ու զիտարու չ'ըլլան:
Ըմպելիքներ կը վաճառուին շիշով, կարկով, տակաւով և յատուկ սնտուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր:
Դիմել յիւեալ հասցէին կամ
Յ. Պ. ԽԷՐՊԵԿԵԱՆ,
535 ՈՒԷՍԹ 57րդ Փողոց, Ն. Ե.

Յ. ԹԱԳԱԿԱՆ ԵՒ Պ. ԵՍԹԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ
Թիւ 242 Իսթ, 41րդ Փողոց

Պատիւ ունին ծանուցանել թէ, այս նոր ճաշարանն բացած են սա վստահութեամբ միայն թէ մաքրութիւն և ընտիր խոհարարութիւն միշտ կը գնահատուի հասարակութեան կողմէ:
Միանգամ փորձել բաւական է մշտնջենական յաճախորդ ըլլալու:

EGYPTIAN KING CIGARETTES.



Ներկայացուցիչ
Պր. Գեղամ Գեղամեան
Թիւ 52 Թրինիթի Փլէյս, Նիւ Եորք.

Ներկայացուցիչ
Պր. Գեղամ Գեղամեան
Թիւ 52 Թրինիթի Փլէյս, Նիւ Եորք.

Հատ անգամ իւր տաճկական ծխախոտ կը վաճառուի ժողովրդեան: Մենք մասնազէտ ըլլալով այս ճիւղի մէջ, և յեզիպտոս ներկայացուցիչներ ունենալով լաւ ծխախոտ ըներել կուտանք մեր սիկարէթներուն համար, որք զուտ եզրիպտական ծխախոտէ շինուած են: Միանգամ փորձելը բաւական է մնայուն յաճախորդ ըլլալու համար: Կը վաճառուի ամէն տեղ: Կեդրոնատեղին է 52 Թրինիթի Փլէյս, Պաթըրի փառքին մօտ:
— Մի՛ մոռանաք անունը. Իճիփէն Բինկ Սիկարէթս: —